

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Սչանյան Ա.Վ.

ՀՊՏՀ, Երևան, ՀՀ, [am-80@mail.ru](mailto:am-80@mail.ru)

Տեղական ֆինանսական համակարգի զարգացման տեսանկյունից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ֆինանսական կարողությունների վրա՝ դիտարկելով ինքնաֆինանսավորման մակարդակի և ֆինանսական կայունության ապահովման հնարավորությունները: Պետական բյուջեից հատկացումները կարևոր են տեղական կառավարման համակարգի պատշաճ գործունեությունն ապահովելու տեսանկյունից, քանի որ սեփական եկամուտներն անբավարար են տարածքային ենթակառուցվածքը պահպանելու, պետական կառավարման գործառույթներն իրականացնելու և սոցիալական ու տնտեսական զարգացման ծրագրերում ներդրումներ իրականացնելու համար:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը իրականացվում է ամենամյա բյուջետային մուտքերի և ելքերի ապահովման նպատակով: Համայնքի բյուջեի հաշվեկշռվածության ապահովման սկզբունքը նշանակում է, որ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեի բաղկացուցիչ մասերում նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերի հանրագումարը չպետք է գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան մասում տվյալ տարում նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերի հանրագումարին: Նշենք, որ համայնքների բյուջեների կառուցվածքը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի:

Համայնքների բյուջեների մուտքերը համայնքների բյուջեներ ստացվող դրամական միջոցներն են և ներառում են բյուջեին օրենքով ամրագրված բյուջետային եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջեից տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գումարների վերադարձից, ոչ դրամային տեսքով այլ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, ինչպես նաև ներգրավված փոխառու և այլ


---

<sup>1</sup> <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենք, 1997թ., *arlis.am*

դրամական միջոցները: Համայնքների բյուջեների ելքերն են Սահմանադրությամբ և օրենքներով համայնքների բյուջեներից տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների իրականացմանն ուղղվող դրամական միջոցները: Բյուջետային ելքերը ներառում են բյուջետային ծախսերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների ձեռքբերումները և ներգրավված փոխառու միջոցների մարումները:

Համայնքային գործառույթների և եկամուտների ապահովման ընթացիկ կառուցվածքը ամրապնդում է համայնքների կախվածությունը պետական աջակցությունից և զգալիորեն սահմանափակում տեղական իշխանությունների մասնակցությունը տարածքային զարգացման գործընթացում:

Ի տարբերություն նախորդ տարիների, ինչպես տեսնում ենք 2016 թվականին ՀՀ համայնքների բյուջեների ընդամենը եկամուտները աննշան աճ են արձանագրել՝ 2015 թվականի համեմատությամբ ընդամենը 0.3 տոկոսով, սակայն անհրաժեշտ է նշել նաև, որ 2016 թվականին նույն ցուցանիշը 2012 թվականի համեմատությամբ զգալիորեն ավելացել է՝ 33,1 մլրդ դրամի չափով կամ 34,7 տոկոսով: Նշենք նաև, որ միայն հարկերի և տուրքերի հաշվին աճը նույն ժամանակահատվածում կազմել է 22,6 տոկոս կամ 4,6 մլրդ դրամ:



Գծապատկեր 1. ՀՀ համայնքների բյուջեների մուտքերի կազմը

Աղյուսակ 1.

Համայնքների բյուջեների եկամուտների կազմը և կառուցվածքը  
/փաստացի, մլրդ դրամ/

Ցուցանիշներ	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը եկամուտներ	95.5	105.8	114.4	128.2	128.6
Հարկեր և տուրքեր	20.0	21.1	23.3	23.8	24.6
Այլ եկամուտներ	26.7	29.9	35.5	45.0	48.8

<sup>2</sup> ՀՀ 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, Հավելված ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 29-ի նիստի N 29 արձանագրային որոշման, e-gov.am

<sup>3</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017, ՀՀ ՄՎԾ, Երևան, 2018թ., էջ 392-393, armstat.am

Պաշտոնական դրամաշնորհներ	48.8	54.8	55.6	59.4	55.3
<b>Տեսակարար կշիռ /տոկոս/</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
Հարկեր և տուրքեր	21.0	20.0	20.3	18.6	19.1
Այլ եկամուտներ	27.9	28.2	31.0	35.1	37.9
Պաշտոնական դրամաշնորհներ	51.1	51.8	48.7	46.3	43.0

Հակառակ բացարձակ ցուցանիշների աճին՝ համայնքների բյուջեների եկամուտների կազմում վերոնշյալ ցուցանիշը տեսակարար կշռով 2012-2016 թվականներին ունեցել է նվազման միտում: Ինչ վերաբերում է այլ եկամուտներին, ապա արձանագրվել է կայուն աճ և ըստ բացարձակ ցուցանիշների, և ըստ տեսակարար կշիռների: Անկայուն փոփոխության միտումներ են արձանագրվել պաշտոնական դրամաշնորհների մասով, իսկ ըստ տեսակարար կշիռների ընդհանուր եկամուտների կազմում 2013 թվականից հետո նկատելի է կայուն նվազման միտում:

Պատկերը մի փոքր այլ է 2017 թվականին՝ դրական միտումով: Չնայած 2017 թվականին ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների 2 մլրդ դրամով նվազմանը՝ սեփական եկամուտների կազմում 2016 թվականի համեմատությամբ ավելի քան 2,5 մլրդ դրամ աճն ապահովվել է հողի հարկի, գույքահարկի, պետական և տեղական տուրքերի, ինչպես նաև վարձավճարների հաշվին<sup>4</sup>:

Ինչպես և նախորդ տարիներին 2017 թվականին ևս պետական բյուջեին ամրագրված եկամտային հարկից, շահութահարկից և բնապահպանական վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել: Այս խնդիրը ևս վերանայման անհրաժեշտություն ունի, քանի որ 2001 թվականից մասհանումներ չեն իրականացվել: Ֆոնդային բյուջեի եկամուտների ցածր տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների կազմում կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում, քանի որ ֆոնդային բյուջեի ծախսային մասում ձեռք են բերվում կապիտալ արժեքներ, որոնք համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա մեծ ազդեցություն կարող են ունենալ:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին համայնքներն արտաքին աղբյուրներից վարկեր և այլ համայնքային փոխատվություններ չեն ստացել: Վկայակոչելով միջազգային փորձը և հաշվի առնելով մեր երկրի տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները՝ առաջարկում ենք խոշոր քաղաքային համայնքների բյուջեների մուտքերի համալրման նպատակով նախաձեռնել պարտատոմսերի թողարկման հնարավորությունների գնահատման գործընթացը: Որպես առաջին քայլ պետք է դիտարկել Երևան քաղաքի բյուջետային մուտքերի կազմավորման առանձնահատկությունները և մշակել համապատասխան ընթացակարգ տեղական պարտատոմսերի շուկայի ձևավորման առնչությամբ: Նշենք նաև, որ բանկային համակարգում առաջացող ավելցուկային իրացվելիությունը լրջորեն բարձրացրել է

<sup>4</sup> Համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվություն /2017թ. տարեկան/, [minfin.am](http://minfin.am)

ՀՀ-ում պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը:

Ճիշտ է, Արևմտյան Եվրոպայի երկրներում մունիցիպալ ենթակառուցվածքների ֆինանսավորման հիմնական աղբյուրը հանդիսանում է բանկային վարկավորումը, բայց չենք կարող ասել, որ այս երկրներում ընդհանրապես բացակայում է քաղաքապետարանների կողմից արժեթղթերի թողարկումը: Վերջին տարիներին մի շարք երկրներում ստեղծվում են մունիցիպալ վարկավորման հատուկ մասնագիտացված ֆինանսական հաստատություններ, որոնք թողարկում են երկարաժամկետ պարտատոմսեր առանց կառավարության երաշխիքների: Նշենք նաև, որ պարտքային արժեթղթերի թողարկման իրավունք ունեն հիմնականում խոշոր վարչական միավորները:

Մունիցիպալ արժեթղթերի ոլորտում անվիճահարույց լիդեր է համարվում ԱՄՆ-ը: Այս երկրում արդեն 200 տարի նահանգները և տեղական մարմինները թողարկում են արժեթղթեր:<sup>5</sup>(*Солдаткин С. Н., 2017*) Գործում են հարկային արտոնություններ, և ստեղծվել են մունիցիպալ արժեթղթերի շուկայի շատ գործիքներ, որոնք հաջողությամբ կիրառվել և կարող են կիրառվել այլ երկրներում:

Համայնքների ֆինանսական անկախության և ֆինանսական կառավարման արդյունավետության մակարդակները բարձրացնելու համար առաջարկվում է ՀՀ համայնքներին նույնպես ներգրավել փոխատվական կապիտալի շուկա: Դա հնարավորություն կտա տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորություններն ամբողջական ծավալով և լիարժեքորեն իրականացնելու համար օրենքով համայնքներին ապահովել ֆինանսավորման նոր աղբյուրներով և միջոցներով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 1997թ., arlis.am
2. ՀՀ 2016-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, Հավելված ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 29-ի նիստի N 29 արձանագրային որոշման, e-gov.am
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2018թ., էջ 392-393, armstat.am
4. Համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվություն /2017թ. տարեկան/, minfin.am
5. Солдаткин С. Н., Государственный и муниципальный долг: теория, методология, практика: учебное пособие, М.:2017.-стр.136

#### *FEATURES OF FORMATION OF COMMUNITY BUDGETS' INPUTS OF THE RA*

*Schanyan A.*

*Annotation*

The Armenian communities do not have enough financial resources to implement the powers set out to address existing issues. It is necessary to envisage financial replenishment funds, in particular it is important to revise the amount of contributions to the state budget of

---

<sup>5</sup> Солдаткин С. Н., Государственный и муниципальный долг: теория, методология, практика: учебное пособие, М.:2017.-стр.136

the Republic of Armenia, to ensure the involvement of communities in the capital market, legislatively regulating matters of borrowing, issuing community bonds. Based on the reforms and international experience in our communities, it is necessary to raise the level of decentralization of power in the Republic of Armenia.